



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

31 հուլիսի 2020 թվականի N 259 -Ա

**ՆԱՐԵԿ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 97-1.1-Ղ4-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի (ծածկագիր՝ 97-1.1-Ղ4-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 29-ի եզրակացությունը և Ն.Դավթյանի դիմումը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. 2020 թվականի օգոստոսի 3-ից Նարեկ Դավթյանին նշանակել Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի (ծածկագիր՝ 97-1.1-Ղ4-1) պաշտոնում՝ 12 ամիս փորձաշրջանով:
2. Նարեկ Դավթյանի փորձաշրջանի համակարգող նշանակել մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ (ծածկագիր՝ 97-3.3-Ղ4-1) Մուշեղ Կոստանդյանին:
3. Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

7/31/2020


ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
 Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**